**Արձանագրություն N 2**

**ԱՔ-Թ10ԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Արմավիր 20 դեկտեմբերի 2021թ.

ժամը՝ 13:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Պարոնյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Սարգսյան |
| | Օ. Պետրոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Մ. Համբարյան |

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը**

(Ա. Պարոնյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ԱՔ-Թ10ԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին,
3. Ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերի մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին,

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝*** *3,* ***դեմ՝*** *0*

**2. ԱՔ-Թ10ԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին**

(Ա. Պարոնյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հասցե, Հեռախոս | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|
| 1 | «ԱԼ ՍԹԱՐ» ՍՊԸ | Ք. Մեծամոր, 2-րդ թղմ., 1բ բն. 15, Հեռ.՝ 077658585 | edo20666@mail.ru |
| 2 | «Ղահրաման» ՍՊԸ | Արարատի մ., գ. Մարմարաշեն, 13փող., տուն 13, Հեռ.՝ 098838347 | mhasanyan@mail.ru |
| 3 | «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ | Ք. Երևան, Ավան-Առինջ 1-ին միկրոշրջան, 1/8շ., բն. 10, Հեռ.՝ 091439955, 055066668 | artakshin55@gmail.com |
| 4 | ԱՁ Հովհաննես Ամիրյան | Ք. Էջմիածին, Չորանքարայի խճ. 8, Հեռ.՝ 095019920 | baker.armenia@gmail.com |
| 5 | «Պրովիզ» ՍՊԸ | Ք. Երևան, Նոր Արեշ 12փ., 99/1, 37, Հեռ.՝ 044703770 | proviz7@mail.ru |
| 6 | «Ֆոտոն» ՍՊԸ | Ք. Երևան, Ռոստոմի 58, Հեռ.՝ 043109530 | ms.foton2014@mail.ru |
| 7 | «Ցիկլոիդ» ՍՊԸ | Ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 48/9, Հեռ.՝ 093882837 | cikloidllc@mail.ru |
| 8 | ԱՁ Դավիթ Միրզոյան | Ք. Արմավիր, Երևանյան 17/3, Հեռ.՝ 099888986 | hghevondyan1983@mail.ru |
| 9 | «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ | Ք. Արմավիր, Երևանյան 17/3, Հեռ.՝ 098041321 | artavazdpetrosyan.sp@mail.ru |

***Ընդունվել է որոշում կողմ՝*** *3,* ***դեմ՝*** *0:*

**3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին**

(Ա. Պարոնյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ՝ «ԱԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-

ի, «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ի, «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, մասնավորապես՝ «**ԱԼ ՍԹԱՐ**» **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի մեջ նշված Հայտարարագրի էջերի քանակը (1.3.2. կետ) չի համապատասխանում ներկայացված հայտարարագրի էջերի քանակի հետ, ինչպես նաև լրացված չեն 4.5, 4.7 և 4.8 կետերը, «**ԱՐՏԱԿՇԻՆ**» **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի մեջ լրացված չեն Հայտարարագրի էջերի քանակը (1.3.2. կետ) և 3.9.1. (Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին) կետը, «**Արտավազդ Պետրոսյան**» **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3. կետը ստորագրված չէ, լրացված չեն 4.5.2., 4.7.1. և 4.7.2 կետերը:
***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 4. Անհամապատասխանությունները շտկելու մասին

(Ա. Պարոնյան)

**Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել «ԱԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ին, «ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ին, «Արտավազդ Պետրոսյան» ՍՊԸ-ին, որոնք պետք է ներկայացնեն ուղղված փաստաթղթերը մինչև 22.12.2021թ. 17:00-ը ներառյալ:
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Պարոնյան)

ԱՔ-Թ10ԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել դեկտեմբերի 22-ին ժամը 17:00-ին, Արմավիրի համայնքապետարան, ՀՀ, ք. Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:
***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Պարոնյան

անդամներ՝ Ա. Սարգսյան

Օ. Պետրոսյան

Քարտուղար՝ Մ. Համբարյան